ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐՏԻՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԲ.00.02- Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
МАНУКЯН МАРТИН АНДРАНИКОВИЧ

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПАРЛАМЕНТА И ПАРЛАМЕНТАРИЗМА В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ.Զ.Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի Եվրոպական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի նոյեմբերի 25 -ին ժամը 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թվականի հոկտեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утвервждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук,профессор **Сафарян Г.Г.**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Степанян О.М.**

кандидат юридических наук, **Саргсян О.З.**

Ведущая организация: **Европейский университет Армении**

Защита состоится 25-го ноября 2023 г. 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван,0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 12-го октября 2023 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Դարերի հոլովույթում կուտակված պառլամենտի և պառլամենտարիզմի պատմական դասերի, դրանց զարգացման բարդ ու հետաքրքիր դինամիկայի, Պլատոնի, Արիստոտելի, Հեգելի, Կանտի, ապա Ջ. Լոքի և Շ. Մոնտեսքյոյի տեսությունների ուսումնասիրման հիման վրա շարունակաբար կատարվում են ընդհանրացումներ և եզրակացություններ: Դրանք լրացվում են նաև հայ իրավական մտքի փայլուն հուշարձանների՝ 4-րդ դարից սկսած մինչև «Որոգայթ փառաց», մինչև մերօրյա սահմանադրագիտության ժառանգությունների աստիճանաբար բարեփոխվող Սահմանադրության մեկնություններով: Միևնույն ժամանակ, պառլամենտին և պառլամենտարիզմին առնչվող հիմնախնդիրները շարունակում են արդիական մնալ, հետևաբար, կարող են դառնալ նոր գիտական հետազոտությունների առարկա: Ասել է թե՝ պառլամենտի և պառլամենտարիզմի տեղի և դերի մասին գիտական մտքի կուտակած պատկառելի ժառանգությամբ հանդերձ՝ այնուամենայնիվ, այսօր դեռևս կարիք է զգացվում նոր մոտեցումներով ուսումնասիրելու պառլամենտի և պառլամենտարիզմի կատարելագործման հիմնախնդիրները, ՀՀ Սահմանադրական բարեփոխումների համատեքստում նորովի մեկնաբանելու դրանք, առաջարկելու ի հայտ եկած հիմնախնդիրների լուծման գիտական նոր ուղիներ:

Թեմայի հետազոտման արդիականությունը պայմանավորված է նաև ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում կառավարման պառլամենտական ձևի տարածվածությամբ և պետական իշխանության բարձրագույն մարմինների գործունեության կազմակերպման առավել արդյունավետ կառուցակարգերի որոնման անհրաժեշտությամբ:

Աշխատանքում բարձրացվող հարցերի համալիր վերլուծությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետությունում նախապատրաստվող սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Հայրենական գրականության մեջ պառլամենտի և պառլամենատրիզմի հարցերին անդրադարձել են հատկապես իրավագիտության դոկտոր, պրոֆեսորներ Ն.Այվազյանը, Գ. Հարությունյանը. Հ.Հակոբյանը,Հ.Խաչատրյանը, Հ.Ստեփանյանը, Ռ.Պետրոսյանը, Գ.Դանիելյանը, ՌԴ ակադեմիկոս Վ.Ներսեսյանցը:

Քննարկվող հիմնախնդիրներին են վերաբերում արևմտյան և ռուս գիտնականների, մասնավորապես՝ Ջ.Լոսկի, Մ.Մահֆուդի, Դ.Բեթհամի, Մ.Վիլլի, Ջ.Լինցի,Օ.Էրգունի, Վ.Մյուլլերի, Կ.Հեսսենի, Ռ.Սուկմանի, Ս.Ալեքսեևվի, Մ.Բագլայի,

Մ.Բիխարինի, Յու.Բացևի, Ն.Ժուրավսկու, Գ.Միխաչևի, Ե.Խուբների, Բ.Չիչերինի, Վ.Չիրկինի, Ե.Բուրդինայի, Լ.Շալլանդի և այլոց աշխատությունները:

Արժանին մատուցելով և հավուր պատշաճի գնահատելով վերոնշյալ գիտնականների էական ներդրումը պառլամենտի և պառլամենտարիզմի դերի ու հիմնախնդիրների լուսաբանման խնդրում, այդուհանդերձ, աշխատանքում նորովի են լուսաբանվել ու մեկնաբանվել քննարկվող հիմնախնդիրներին առնչվող համալիր հարցադրումները:

Հետազոտության օբյեկտը. Հետազոտության օբյեկտն պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև ծագող սահմանադրաիրավական հարաբերություններն են:

Հետազոտության առարկան. Հետազոտության առարկան պառլամենտի և պառլամենտարիզմի կատարելագործմանն առնչվող հիմնախնդիրների ամբողջությունն է, դրանց էությունը, առանձնահատկությունները, ժամանակակից հայեցակարգային մոտեցումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Հետազոտության նպատակն է՝ պառլամենտի և պառլամենտարիզմի համաշխարհային պրակտիկայի վերլուծության հիման վրա կատարել համակարգված և համալիր հետազոտություն՝ հիմնավորելու, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը չի խախտում պետության ինքնիշխանության հատկանիշը:

Վերոնշյալ նպատակին հետամուտ՝ հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- բացահայտել՝ ունի՞ արդյոք Ազգային Ժողովը գործառութային գերակայություն իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ, եթե այո, ապա այն իրո՞ք խախտում է պետական իշխանության ճյուղերի միջև առկա սահմանադրական հավասարակշռվածությունը,
- առկա՞ են արդյոք կառավարության գործունեության կայունության ապահովման բավարար իրավական երաշխիքներ, և, բացի այդ, կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը ինչպիսի՞ մարտահրավերներ է պարունակում.
- առկա՞ են բավարար կառուցակարգեր գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար, այդ հարցում ինչպիսի՞ դերակատարություն պետք է ունենա խորհրդարանական ընդդիմությունը.
- արդյոք կառավարության և վարչապետի ձեռքում պետական իշխանության գերկենտրոնացման վտանգ չի՞ առաջանում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համեմատական անալիզի և սինթեզի, մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական, ինչպես նաև վիճակագրական ու վերլուծական մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը վերը նշված հայրենական և արտասահմանյան գիտնականների, ինչպես նա Մ.Դուրվերժենի, Յու. Կրասնովի, Լ.Շալլանդի,Յու.Բոյկոյի,Պ.Ռոմանովի,Վ.Լապատևայի,Ա.Կոմարովի,Վ.Գրաֆսկու,Մ.Բագլայի,Վ.Զորկինի,Բ,Գաբրիչիձեի,Ս.Հագարդի.Մ.Մչաբիի,Լ.Լիթլիի,Դ.Լևինսոնի, Ռ.Ոալդեսի,ԱՇուգարթի, Ջ.Վալդոնի,Մ.Կովալևսկու,Ն.Կարեևի, Յու.Կորգոնյուկի, Ա. Կավյորի, Բ.Կրիլովի, Ս.Կոտլյարեվսկու, Ե.Բարբերի, Բ.Աքերմանի. Յ.Մազակի և այլոց աշխատություններն են:

Հետազոտության նորմատիվ հիմքը միջազգային և ներպետական նորմատիվ-իրավական ակտերն են, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութերը:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հեղինակը հստակ հիմնավորվել է, որ չնայած իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական նմուշօրինակի (մոդելի) պարագայում պետական իշխանության մյուս մարմինների նկատմամբ Ազգային Ժողովը ձեռք է բերում այսպես կոչված՝ <<գործառութային գերակայություն>>, սակայն, այդ հատկանիշն ինքնին չպետք է դիտարկել որպես պետական իշխանության օրենսդիր, գործադիր ու դատական ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշության խախտում: Հեղինակը հիմնավորել է նաև, որ պետական իշխանության մարմինների միջև գործող զսպող, հավասարակշռող և փոխլրացնող համակարգերը կրում են ոչ միայն միջճյուղային, այլ նաև ներճյուղային բնույթ: Այն է՝ միմյանց զսպում, հավասարակշռում և փոխլրացնում են ոչ միայն պետական իշխանության ճյուղերը, այլև պետական իշխանության ճյուղերի ներսում գտնվող մարմինները, այսինքն՝ պետական իշխանության ճյուղերի ներսում ևս առկա են ներճյուղային զսպող, հավասարակշռող և փոխլրացնող կառուցակարգեր:

Աշխատանքում կատարվել է պառլամենտի և պառլամենտարիզմի հիմքերը կազմող հատկանիշների (տարրերի) ամբողջական վերլուծություն:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Իշխանությունը պատկանում է ոչ թե պառլամենտին, այլ ժողովրդին: Պառլամենտական իշխանությունն այս դեպքում ընդամենը լիազորված իշխանություն է, քանի որ ինքնիշխան է միայն ժողովուրդը, իսկ պառլամենտը լոկ մարմնավորում է այդ ինքնիշխանությունը՝ որևէ փոփոխություն չմտցնելով ինքնիշխանության իրավունքների օբյեկտում: Հետևաբար, պառլամենտարիզմի առանձնահատկություններից (հատկանիշներից) մեկը տարբեր իշխանական (օրենսդիր, գործադիր և դատական) մարմինների միջև պետության կառավարման ոլորտում համատեղ ռազմավարության մշակման, կառավարության քաղաքականության և պառլամենտի քաղաքական առաջնահերթությունների պարտադիր համաձայնեցման անհրաժեշտությունն է:

2. Պառլամենտարիզմը դրսևորվում է՝ ա) բուն պառլամենտական, այսինքն՝ երկրի բուն ներկայացուցչական մարմնի մակարդակում, բ) պետական այլ մարմինների հետ պառլամենտի փոխհարաբերությունների մակարդակում և գ) հասարակության հետ քաղաքական և իրավական մշակույթի մակարդակում:

3. Պառլամենտարիզմը ժամանակակից աշխարհի բազմաթիվ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի կոնկրետ երևույթ է, ժողովրդական ներկայացուցչության ձև , որի հիմքում ընկած է համաժողովրդավարական, համամարդկային արժեքային համակարգը, որն էլ կոչված է ապահովելու քաղաքացիների անմիջական մասնակցությունը պետական կյանքի կարևորագույն հարցերի լուծմանը: Պառլամենտարիզմը ներառում է կառավարման ամենատարբեր ձևերի բազմաթիվ տարրեր, օժտված է ժողովրդավարական քաղաքական համակարգի որակներով և կարող է դրսևորվել տարբեր պետություններում, անկախ դրանց պետական կառուցվածքի ձևից:

4. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, լինելով Հայաստանի նորանկախ պետության առաջին խորհրդարանը, կատարեց իր պատմական առաքելությունը հայոց պետականության կայացման գործում: Չնայած դրան՝ 1995-2005 թվականներին պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում լիարժեքորեն չկայացավ, քանզի 1995 թվականի Սահմանադրությամբ նախատեսված իրավակարգավորումների պայմաններում ձևավորվել էր պետական իշխանության գործառույթների և լիազորությունների չհավասարակշռված գերկենտրոնացում Հանրապետության նախագահի ձեռքում, ինչն անմիջականորեն հանգեցրել էր պետական իշխանության օրենսդիր և դատական իշխանության ճյուղերի նկատմամբ գործադիր իշխանության գերիշխանության: Սահմանդրության

2005 թվականի փոփոխություններն, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ պառլամենտի և պառլամենտարիզմի մասով թեև առաջընթաց էին 1995թ. Սահմանադրության նկատմամբ, սակայն դրանից Հանրապետության նախագահի քաղաքական դերակատարությունը և գերիշխող դիրքը չնվազեց: 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ անցում կատարվեց խորհրդարանական կառավարման ձևի, որով մեծացվեց Ազգային ժողովի դերը պետական իշխանության ու կառավարման մարմինների ձևավորման գործում, ընդլայնվեց Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների շրջանակները, ամրապնդվեցին խորհրդարանական փոքրամասնության իրավունքների սահմանադրական երաշխիքները, իսկ առաջիկայում հիմք կդառնա Ազգային ժողովի պատգամավորների ընտրության գործող կարգը բարելավելու համար:

5. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հետապնդած նպատակին հնարավոր է հասնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելներից (<<կոշտ>>,<<ճկուն>>) յուրաքանչյուրի ընտրության դեպքում, եթե մինչև իշխանությունների բաժանման և հավասարակշռման որևէ մոդելի ընտրությունը համակողմանի ուսումնասիրության արդյունքում հաշվի առնվեն նախատեսվող մոդելը բնութագրող առանձնահատկությունների կիրառելիությունը այն պետությունում, որտեղ այն պետք է գործարկվի: Հետևաբար, իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելին անցումն ինքնին դեռևս բավարար երաշխիք չէ զարգացնելու համար այն պնդումը, որ Հայաստանի Հանրապետությունում լուծվել են պետական իշխանության առջև ծառացած խնդիրները: Սակայն խորհրդարանական մոդելին անցումը բոլոր դեպքերում կարող է նոր խթան հանդիսանալ իշխանության կազմակերպման հիմքում այնպիսի մոտեցումների ներդրման համար, որոնք կերաշխավորեն Սահմանադրությամբ ամրագրված կառուցակարգերի արդյունավետ կիրառման ապահովումը:

6.Ժամանակակից սահմանադրական զարգացումներին և մարտահրավերներին համահունչ պետական իշխանության կազմակերպումը արդյունավետ կիրականացվի միայն այն դեպքում, երբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը կգործառվի հիմքում ունենալով՝ ա) պետական իշխանության կառուցակարգային (ինստիտուցիոնալ) հստակ բաժանումը, բ) պետական իշխանության գործառութային (ֆունկցիոնալ) հստակ բաժանումը, գ) պետական իշխանության ճյուղերի անձնակազմերի առանձնացումը, դ) պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների, հավասարակշռման և փոխլրացումների գործուն կառուցակարգերի առկայությունը, ե) պետական իշխանության

մարմինների միջև առաջացած վեճերի՝ սահմանադրական արդարադատության ճանապարհով լուծումը:

7. Խորհրդարանական մոդելին սահուն անցում չապահովելը, նաև իշխանության ճյուղերի միջև զսպումների, հավասարակշռման և փոխլրացումների կառուցակարգերի ոչ լիարժեքությունն անխուսափելիորեն կհանգեցնեն գործառույթ- ինստիտուտ-լիազորություն սահմանադրական շղթայի խաթարմանը: ՈՒստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունների հիմքում դնել անյպիսի մոտեցումներ, որոնք խարսխված կլինեն խորհրդարանական մոդելին բնորոշ առնձնահատկությունների ընկալման և գործնականում դրանց կիրառման ապահովման վրա:Այս կապակցությամբ գործող Սահմանադրությամբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելը բնութագրող հիմնական հատկանիշները և առկա հիմնախնդիրների վերհանումն անհրաժեշտ ենք համարում դիտարկել հետևյալ շրջանակներում՝

ա) հստակեցվա՞ծ է արդյոք պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգը.

բ) ինչպիսի՞ ինստիտուցիոնալ և գործառութային կարգավիճակ է ձեռք բերել Հանրապետության նախագահը. նրան վերապահվե՞լ են արդյոք բավարար լիազորություններ խորհրդարանական մոդելի պարագայում իր գործառույթների պատշաճ իրականացման համար.

գ) խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում ինչպիսի՞ գործառութային դերակատարություն է ստանձնել օրենսդիր իշխանությունը՝ ի դեմս Ազգային ժողովի.

դ) նախատեսվե՞լ են արդյոք օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ և գործուն վերահսկողության իրականացման բավարար երաշխիքներ.

ե) ապահովվե՞լ է արդյոք դատական իշխանության անկախությունը.

զ) խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում ինչպիսի՞ գործառութային դերակատարություն են ստանձնել կառավարությունը և վարչապետը:

8. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական փոփոխություններով զուգորդված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելների <<հաճախակի>> փոփոխությունը չի նպաստել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի պատշաճ կիրառման համար անհրաժեշտ սահմանադրական արժեքների պահպանման և շարունակական ամրապնդման

երաշխավորմանը: ՈՒստի, այն թեզը, ըստ որի՝ սահմանադրական փոփոխությունների միջոցով իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելների շարունակական փոփոխությունը կարող է երաշխիք լինել պետական իշխանության առջև ծառացած խնդիրների լուծման համար, մեր կարծիքով, հիմնավոր չէ:

9. Հայաստանի Հանրապետությունում օրենքների մշակման և օրենսդրական նախաձեռնությունների պրակտիկան վկայում է, որ օրենսդրական նախաձեռնությունների գերակշիռ մասը պատկանում է կառավարությանը, ինչն անուղղակիորեն հանգեցրել է օրենսդրական գործունեության ոլորտում կառավարության դերակատարության շեշտակի ընդլայնմանը և Ազգային ժողովի դերակատարության խիստ նվազմանը, որի պատճառով անխուսափելիորեն խախտվում էօրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշռությունը: Մեր կարծիքով՝ Ազգային ժողովի քաղաքական դերակատարության բարձրացման համատեքստում ՀՀ կառավարության 25 օգոստոսի 2016 թվականի թիվ 858-Ն որոշմամբ ստեղծված <<Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն հիմնադրամի>> օգնությամբ Ազգային ժողովը պետք է ավելի ակտիվ դերակատարություն ստանձնի օրենքների մշակման և օրենսդրական նախաձեռնությունների ոլորտում: Այս կերպ Ազգային Ժողովը, լինելով ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմինը, պետք է նախանշի քաղաքական այն ուղղությունները և անելիքները, որոնց միջոցով Կառավարությունն իր ծրագրին համապատասխան, պետք է մշակի և իրականացնի ներքին և արտաքին քաղաքականությունը:

10. Նկատի ունենալով, որ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով Ազգային ժողովում կայունության երաշխավորմանը նպաստող հիմնական գործոնը զարգացած կուսակցական համակարգի առկայությունն է, իսկ Հայաստանի Հանրապետությունում կուսակցական համակարգի զարգացման աստիճանը դեռևս բավարար մակարդակի վրա չէ խորհրդարանական մոդելի պարագայում իր առջև դրված խնդիրների լուծման համար, ատենախոսության հեղինակն առանցքային է համարում հետևյալը.

ա) կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը Ազգային Ժողովի գործունեության նախապայման է, իսկ դրա բացակայությունը կարող է հանգեցնել կառավարության գործունեության անկայունությանը,

բ) կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը չպետք է հանգեցնի Ազգային ժողովում խորհրդարանական մեծամասնության <<գերիշխանությանը>>,

գ) խորհրդարանային մեծամասնությունը պետք է հնարավորություն ունենա կառավարելու, բայց այն չպետք է իրականացվի միանձնյա՝ առանց բավարար քննարկումների և քաղաքական բանավեճերի,

դ) խորհրդարանական ընդդիմությունը պետք է հնարավորություն ունենա մասնակցելու պետական կառավարմանը՝ արտահայտելով իր տեսակետները և ընդդիմանալով քաղաքական մեծամասնությանը, որի իրականացման համար խորհրդարանական ընդդիմությանը տրված լիազորությունները պետք է լինեն անհրաժեշտ և բավարար դրանց իրացման իրավական երաշխիքներով հանդերձ,

ե) խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության միջև գործառութային հավասարակշռության ապահովման հիմնական ճանապարհը կայուն և զարգացած կուսակցական համակարգի առկայությունն է: Հետևաբար, կուսակցական համակարգի զարգացմանը և ամրապնդմանն ուղղված քայլերը շարունակում են արդիական լինել և նույնիսկ հրատապություն են ձեռք բերել:

11. Քանի որ խորհրդարանական կառավարման պայմաններում իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերը ձևավորվում են նույն քաղաքական ուժի կողմից, ուստի իշխանության նշված ճյուղերը գտնվում են նույն քաղաքական ուժի ձեռքում, որի պարագայում Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն կազմող ուժը որոշակիորեն կաշկանդված է կառավարության գործունեության նկատմամբ, որովհետև խորհրդարանական մոդելի պարագայում, որպես կանոն, կառավարության ղեկավարը՝ վարչապետը, խորհրդարանական մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի ղեկավարն է, որով պայմանավորված՝ Ազգային ժողովում խորհրդարանական մեծամասնության քաղաքական գործունեությունը անխուսափելիորեն կաշկանդված է մի կողմից՝ կուսակցության ղեկավարի, մյուս կողմից՝ վարչապետի դիրքորոշումներով, իսկ գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ են բավարար քաղաքական երաշխիքներ, գտնում ենք, որ որպես այդպիսին պետք է լինի հենց ուժեղ խորհրդարանական ընդդիմությունը, քանի որ վերջինս կաշկանդված չէ իշխող կուսակցության շահերով և առաջնահերթություններով:

12. Կարևորելով խորհրդարանական ընդդիմության պաշտպանության խնդիրը, արձանագրելով, որ միջազգային մակարդակով գոյություն ունեն սակավաթիվ ստանդարտներ, որոնք միտված են խորհրդարանական ընդդիմության պաշտպանությանը, ըստ մեզ՝ պետք է մշակել առավել արդյունավետ միջոցներ, որոնք պետք է ամրապնդեն խորհրդարանական ընդդիմության

դերակատարությունը՝ նրան վերապահելով համապատասխան գործիքակազմ և միջոցներ:

13. Պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման տեսանկյունից առանձնացնում ենք հետևյալ հիմնադրույթները՝

1) պետական իշխանության մարմինների միջև առաջացած վեճերի լուծումը պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով հետևյալ հայեցակարգային մոտեցումները. ա) իրավական բնույթի վեճերը պետք է լուծվեն բացառապես իրավական հարթության վրա՝ սահմանադրական կամ վարչական արդարադատության միջոցով, բ) քաղաքական բնույթի վեճերը պետք է լուծվեն բացառապես քաղաքական բանակցությունների միջոցով, իսկ երբ դրանք այդ կերպ չեն լուծվում և իրավական բնույթ են ստանում, պետք է լուծվեն քաղաքական հարթության վրա.

2) անհրաժեշտ է ընդլայնել սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման հիմքով սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեցող սուբյեկտների շրջանակը՝ այդպիսի լիազորություն վերապահելով նաև անկախ (ինքնուրույն) սահմանադրական մարմիններին:

14. *Այսպիսով, պառլամենտարիզմը, ըստ ատենախոսության հեղինակի, պետք է սահմանել որպես՝ պետական իշխանության ոլորտում այնպիսի հարաբերությունների համակարգ, որն իրականացվում է քաղաքական-իրավական մշակույթի բարձր աստիճան ունեցող ժողովրդավարական հասարակության պայմաններում, և որի հիմքում ժողովրդական ներկայացուցչությունը, որպես պետական ինքնիշխանության արտահայտիչ, պետական կառավարման համակարգում զբաղեցնում է առաջատար տեղերից մեկը և, պետական այլ ինստիտուտների հետ միասին, պետության քաղաքականության մշակման գործընթացի վրա վճռորոշ ազդեցություն ունի իշխանությունների բաժանման (տարանջատման) համակարգում:*

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ դրա արդյունքների հիման վրա ձևավորված դրույթները և եզրահանգումները որոշակիորեն կզարգացնեն սահմանադրական իրավունքի տեսությունը, իսկ ստացված արդյունքները կարող են օգտագործվել հետագա հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ աշխատանքում ձևավորված հիմնական դրույթները կարող են օգատգործվել իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև բարձրագույն

ուսումնական հաստատություններում՝սահմանադրական իրավունքի դասընթացի դասավանդման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական թեման քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները և աշխատանքը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունների արդյունքները արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում ու մենագրություններում, որոնք լույս են տեսել հայրենական և օտարերկրյա գրախոսվող գիտական ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն բաղկացած է ներածությունից և երեք գլուխներից, որոնք ներառում են տասը ենթագլուխներ, եզրակացություններից և օգտագործված գրականության, իրավական ակտերի և միջազգային պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության տեսական, իրավական, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունն ու հետազոտության արդյունքների փորձարկումը:

Աշխատանքի՝ <<**Պառլամենտարիզմի հասկացությունը, էությունը և պատմական տեսակները**>> վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի <<**Պառլամենտարիզմի հասկացությունը և էությունը**>> վերնագրով առաջին ենթագլխում բացահայտվել են պառլամենտի ծագման, ձևավորման, զարգացման, պառլամենտի և պառլամենտարիզմի փոխկապակցվածության, պառլամենտարիզմի՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության ձևի տեսաիրավական հիմքերը, ինչպես նաև առանձնացվել են ժամանակակից պառլամենտին և պառլամենտարիզմին բնորոշ հատկանիշները:

Առաջին գլխի <<**Պառլամենտարիզմի պատմական ձևերը և դրանց ժամանակակից տարատեսակները**>> վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացվել են պառլամենտարիզմի կայացումն ու զարգացումն ընդգրկող պատմական ձևերը (փուլերը), ինչպես նաև քաղաքական համակարգի ու կառավարման ձևի առանձնահատկություններով պայմանավորված՝ ժամանակակակից պառլամենտարիզմի տեսակները:

Առաջին գլխի <<**Պառլամենտի և պառլամենտարիզմի ծագումը և զարգացումը Հայաստանում**>> վերնագրով երրորդ ենթագլխում ըստ ժամանակագրական փուլերի, հանգամանորեն վերլուծության են ենթարկվել Հայաստանում պառլամենտի և պառլամենտարիզմի պատմությունը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ <<**Պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում**>> վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

<<**Իշխանությունների բաժանումը՝ որպես պառլամենտարիզմի կայացման անհրաժեշտ պայման**>> առաջին ենթագլխում վեր են հանվել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից ընկալումները, հիմնական բնութագրիչները և մոդելները, համալիր հետազոտության առարկա են դարձվել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի բնորոշ հատկանիշներն ու դրանց կիրառման ապահովման արդի հիմնախնդիրները ՀՀ ում և ատենախոսության հեղինակի կողմից արվել են դրանց լուծման առաջարկներ (տես՝ պաշտպանության դրվող դրույթները):

Երկրորդ գլխի <<**Բազմակուսակցությունը՝ որպես պառլամենտարիզմի կայացման անհրաժեշտ պայման**>> երկրորդ ենթագլխում հիմնավորելով և առաջ մղելով այն գաղափարը, որ խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում կուսակցություններն են այն միակ քաղաքական խողովակը, որի միջոցով ժողովուրդն իրականացնում է իր իշխանությունը՝ ձևավորելով օրենսդիր մարմին, որն էլ իր հերթին կազմավորում է պետական իշխանության մնացած համակարգը, եզրակացություն է արվել, որ Հայաստանի կուսակցական համակարգը դեռևս չի համապատասխանում խորհրդարանական կառավարման ձևի օբյեկտիվ չափորոշիչ պայմաններին՝ քաղաքական համակարգի ավանդական անձնակենտրոնության հաղթահարված չլինելու հետևանքով: Վկայակոչելով ՄԻԵԴ պրակտիկան, ատենախոսության հեղինակը հիմնավորել է նաև,որ կուսակցության գործունեության հակասահմանադրականությունից բացի, չի կարող գոյություն ունենալ նրա գործունեությունը ժամանակավորապես արգելելու որևէ այլ հիմք, իսկ այդ

կապակցությամբ սահմանադրական դատարանի որոշումը չպետք է ունենա հետադարձ ուժ:

<<**Ազգային ժողովի ձևավորման եղանակները: Պատգամավորների կարգավիճակը**>> վերնագրով երկրորդ գլխի երրորդ ենթագլխում ատենախոսության հեղինակը հիմնավորել է, որ անհրաժեշտ է վերացնել կոալիցիաներ կազմելու՝ կուսակցությունների թվի սահմանափակումը, ինչպես նաև, միջազգային փորձը հաշվի առնելով, առաջարկել է էապես ավելացնել կոալիցիա կազմելու համար նախատեսված ժամանակահատվածի տևողությունը: Բացի այդ, խորհրդարանում քաղաքական ուժերի ներկայացվածությունը խրախուսելու համար ատենախոսության հեղինակն առաջարկում է 1-ական տոկոսով նվազեցնել ընտրական արգելապատնեշները՝ համապատասխանաբար սահմանելով 4 և 6 տոկոս կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար, պահպանելով երրորդ առավելագույն թվով ձայներ ստացած կուսակցության կամ դաշինքին մանդատների բաշխման մասնակցելու դրույթն այն դեպքում, երբ արգելապատնեշըհաղթահարել են միայն երկու քաղաքական ուժ: Ատենախոսության հեղինակն առաջարկել է նաև նվազեցնել խորհրդարանական ընտրությունների համար նախատեսված ընտրական գրավի չափը՝ մինչև 7,5 մլն դրամ: Ատենախոսության հեղինակն առաջարկել է նաև ԱԺ ընտրակարգով նախատեսել փոփոխություններ՝ սահմանելով որ յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Նույն ենթագլխում առաջարկվել է փոփոխել նաև խորհրդարանում ազգային փոքրամասնությունների ընտրվելու կարգը, սահմանելով պարզ քվոտա, այն է՝ նախատեսելով մեկական ազգային փոքրամասնության ներկայացուցչի ներառում:

<<**Ազգային Ժողովի և գործադիր ու դատական իշխանությունների փոխհարաբերությունները**>> չորրորդ ենթագլխում ատենախոսության հեղինակն այն եզրակացությանն է հանգել, որ խորհրդարանական մոդելի պարագայում պետական իշխանության ճյուղերի կողմից իրականացվող գործառույթներն իրականում հավասարազոր բնույթ չունեն և միմյանցից տարբերվում են իրավաբանական ուժով ու բովանդակությամբ, այն է՝ օրենսդիր իշխանության գործունեությունն ունի օրենսդրական բնույթ, իսկ դատական և գործադիր իշխանություններինը՝ ենթաօրենսդրական: Ատենախոսության հեղինակը հիմնավորել է նաև, որ օրենսդիր իշխանությունը իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ ունի այսպես կոչված՝ <<գործառութային գերակայություն>>, ինչն ինքնին չպետք է դիտարկել որպես պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշռության

խախտում: Քանզի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի էությունը ոչ թե իշխանության ճյուղերին հավասարազոր գործառույթներ վերապահելն է, որոնք, իշխանության ճյուղերի գործառույթների բնույթով պայմանավորված՝ արդեն իսկ հավասարազոր չեն, այլ՝ պետական իշխանության յուրաքանչյուր ճյուղին անհրաժեշտ և բավարար լիազորությունների տրամադրման միջոցով վերջիններիս գործառութային անկախության ապահովումն է: Անդրադառնալով հարցին, որ օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի փոխհարաբերություններում կենտրոնական հարցերից մեկը գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունն է և կարևորելով, որ նման պայմաններում առանցքային կարևորություն է ձեռք բերում գործադիր իշխանության (վարչապետի) գերիշխանության զսպման համար գործուն մեխանիզմների նախատեսումը, ատենախոսության հեղինակը օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման քաղաքական երաշխիք դիտարկում է ուժեղ խորհրդարանական ընդդիմության առկայությունը, քանզի ընդդիմության կայացման գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը:

<<**Ազգային ժողովի կարևորագույն լիազորությունները և պառլամենտարիզմի հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում**>> վերտառությամբ երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի <<**Պառլամենտարիզմի իրացումը օրենսդրական գործառույթի միջոցով**>> առաջին ենթագլխում հղում անելով միջազգային փորձին և վերլուծելով, թե սահմանադրություններն ինչ ծավալի իրավասություն/ներ են ամրագրում օրենսդիր մարմիններին, ատենախոսության հեղինակն առանձնացրել է խորհրդարանների երեք տեսակ՝ եզրակացնելով, որ ՀՀ Ազգային ժողովը անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան է, որի իրավական դիրքի առաջնային բնութագրիչներն արտացոլված են հենց Սահմանադրությունում:

Երրորդ գլխի <<**Պետական բյուջեի հաստատումը և այն կատարելու հաշվետվության քննարկումը**>> երկրորդ ենթագլխում ներկայացնելով եվրոպական մի շարք երկրների օրենսդրական փորձն ու դրանց համեմատական վերլուծության արդյունքում արված եզրահանգումները,ատենախոսության հեղինակն առաջարկել է պետական բյուջեում փոփոխություններ կատարելը ամրագրել ոչ թե օրենքով, այլ՝ Սահմանադրությամբ:

Երրորդ գլխի <<**Ազգային ժողովի արտաքին քաղաքական լիազորությունները: Պառալմենտական դիվանագիտություն**>> երրորդ

ենթագլխում անդրադարձ է կատարվել <<պառլամենտական դիվանագիտության>> հայեցակարգային մոտեցման տեսական և մեթոդաբանական առումներին: Պառլամենտական դիվանագիտության էության ու հասկացության վերաբերյալ եղած միջազգային տեսակետների վերլուծության ու համադրման հիման վրա՝ ատենախոսության հեղինակը մշակել է սեփական մոտեցում դիվանագիտության այդ տեսակի և ժողովրդական դիվանագիտության տարբերությունների մասին: Ավելին՝ նկատի ունենալով, որ գոյություն չունի <<պառլամենտական դիվանագիտություն>> հասկացության ընդհանուր սահմանում, ատենախոսության հեղինակը տվել է նաև դրա գիտական բնորոշումը:

Ատենախոսության հեղինակը շարադրել է հետազոտության արդյունքների հիման վրա մշակված եզրակացությունները, որոնք հանգում են հետևյալին.

1. Պառլամենտարիզմի ծագումը, ձևավորումը, դրա բովանդակությունն ու էությունը անհրաժեշտ է ուսումնասիրել պատմական զարգացման մեջ: Այն բազմաշերտ համակարգ է, որն ավարտուն չէ և պայմանավորված է օրենսդիր մարմինների անընդհատ փոփոխվող լիազորություններով, ազդեցության ոլորտներով, երկրի սոցիալ տնտեսական, քաղաքական և մշակութային առանձնահատկություններով,պետական կառավարման ձևերով և այլ գործոններով:

Պառլամենտն առանց պառլամենտարիզմի վերածվում է պատրանքի: Հետևաբար, պառլամենտը և պառլամենտարիզմը ժողովրդավարական հասարակարգերում իրար փոխկապակցված, մեկը մյուսին լրացնող, մեկը մյուսի վրա ազդող, կառուցվածքային մարմին և այդ մարմնի գործընթաց են: Պառլամենտարիզմի դրսևորումները նախևառաջ նրա քաղաքական բնույթի մեջ են: Պառլամենտարիզմը՝ որպես իրավաքաղաքական երևույթ, որպես համակարգ կարող է գոյություն ունենալ միմիայն ժողովրդավարական պետություններում՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

2. Պառլամենտարիզմի տեսահիրավական հիմքերն էապես կապված են ընտրական այն համակարգի կիրառման հետ, որով ձևավորվում է պառլամենտը: Մեծամասնության առկայությունը, կոալիցիայի կազմումը, օրենքով փոքրամասնությանը տրված իրավունքները, փոխզիջումների, երկխոսության պայմաններում օրենքների ընդունումը և որոշումների կայացումն այն պարարտ հողն են, որի վրա հիմնվում է պառլամենտարիզմը;

3. Ժողովրդավարական համակարգի պայմաններում պառլամենտն անհրաժեշտ ինստիտուտ, ժողովրդին և իշխանությանը կապող մարմին է, իսկ պառլամենտարիզմը օրենքների ընդունման կառուցակարգն ապահովող, դրանց թափանցիկությունն ու հրապարակայնությունը երաշխավորող, քաղաքացիական ինստիտուտներին այդ գործընթացներին մասնակից դարձնող, հասարակության կայունությանը, կենսագործունեությանը և զարգացմանը նպաստող համակարգ է:

4.Պառլամենտարիզմը նեղ իմաստով գոյություն ունի միայն այնպիսի պայմաններում, երբ պառլամենտում ոչ մի քաղաքական կուսակցություն չունի մանդատների բացարձակ մեծամասնություն և, ըստ այդմ, ինքն իրենով չի կարող ձևավորել միակուսակցական կառավարություն: Միայն այդ դեպքում պառլամենտի առջև կառավարությունը կկրի իրական պատասխանատվություն,

5. Պառլամենտարիզմի էությունը վեր հանելու համար անհրաժեշտ է որոշարկել <<պառլամենտարիզմ- պառլամենտ>> եզրույթների հաջորդականությունը: Պառալմենտարիզմը պառլամենտի թե՛ տեսական և թե՛ գործնական գործունեությունն է: Պառլամենտ հասկացությունը լայն իմաստով ասոցացվում է ներկայացուցչական ժողովրդավարության հետ, ինչը նշանակում է, որ այն պետական իշխանության ներկայացուցչական մարմին է, ուստի չի կարող լինել ժողովրդավարություն առանց պառլամենտարիզմի, իսկ պառլամենտարիզմը չի կարող լինել առանց պառլամենտի,

6.<<Պառլամենտարիզմ>> և<<պառլամենտական կառավարում>> հասկացությունները միմյանցից տարբերվում են այն բանով, որ պառլամենտարիզմ կարող է լինել նաև պառլամենտական կառավարման ձև չունեցող երկրում, բայց, մեր կարծիքով, պառլամենտարիզմը ոչ թե սոսկ զարգացած, հեղինակավոր և գործուն պառլամենտ ունենալն է, այլ այն, որ պառլամենտը (օրենսդիր իշխանությունը), Սահմանադրությամբ և օրենքներով ունի ոչ թե առավելություն, այլ առաջնայնություն իշխանության մյուս թևերի՝ գործադիրի և դատականի համեմատ: << Սահմանադրության մի շարք դրույթներից բխում է, որ գործադիրը և դատական իշխանությունը, որպես կանոն, կազմվում են պառլամենտի միջոցով:

7. Պառլամենտարիզմը բնութագրում է հասարակության կազմակերպվածությունը և ժողովրդավարության մակարդակը: Պառլամենտական հանրապետությունում չկա <<նախագահականիզմ>> եզրույթ, բայց սովորաբար կա Նախագահի ինստիտուտ, իսկ նախագահական հանրապետություններում կարող է լինել պառլամենտարիզմ, քանի որ կա պառլամենտ: Պառլամենտարիզմը ծնվում է քաղաքականության շնորհիվ, ի սկզբանե քաղաքական է, սակայն ձևավորվում և գործում է նորմատիվ իրավական ակտերի միջոցով, ինչի հետևանքով դառնում է նաև իրավական:

8. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իմաստը հենց այն է, որ հնարավոր լինի խուսափել դրանց հակամարտությունից, վերին աստիճանը բարձրանալու նրանց ձգտումից ու բախումներից, որպեսզի բացառվի մեկ մարմնի կամ անձի ձեռքում պետական իշխանության գործառույթների կենտրոնացումը: Հետևաբար, խորհրդարանական կառավարման մոդելի (նմուշօրինակի) պայմաններում օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողության իրականացման համար որպես անհրաժեշտ և բավարար քաղաքական երաշխիք կարող է հանդիսանալ ուժեղ խորհրդարանական ընդդիմության առկայությունը:

9. Ըստ հեղինակի՝ ՀՀ-ում խորհրդարանական ընդդիմությանը վերապահված լիազորությունները դեռևս բավարար չեն խորհրդարանական կառավարման ձևի պարագայում խորհրդարանական մեծամասնությանը բավարար չափով զսպելու և հավասարակշռելու համար: Հետևաբար, հարկ է մշակել և ընդունել <<Խորհրդարանական ընդդիմության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք, որով անմիջական կերպով պետք է կարգավորվեն խորհրդարանական ընդդիմության սահմանադրական կարգավիճակից բխող իրավական կարգավիճակի, հիմնական գործառույթների, լիազորությունների և քաղաքական պատասխանատվության հետ կապված հարցերը, Սահմանադրությամբ խորհրդարանական ընդդիմությանը վերապահելով օրենքի լրացուցիչ քննարկում պահանջելու, կամ օրենքի ընդունման ժամկետի հետաձգման իրավունք:

10. Մեր կարծիքով՝ խորհրդարանական ընդդիմությանը,անկախ թվաքանակից, Սահմանադրության հետագա փոփոխությունների ընթացքում պետք է իրավունք տրվի դիմելու Սահմանադրական դատարան՝ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար:

11. Ընտրակարգի պարզեցման, լրացուցիչ ցուցակներից ձերբազատման, իշխող կուսակցությանն այլ լրացուցիչ տեղեր չտալու, հետևաբար նաև՝ համամասնության և ներկայացուցչության սկզբունքը հարգելու անհրաժեշտությունից ելնելով՝ պետք է ազգային փոքրամասնությունների համար սահմանել պարզ քվոտա:

12. Պետական իշխանության մարմինների միջև վեճերի սահմանադրական ճանապարհով լուծման կարևորությունից ելնելով՝ առաջարկվում է ընդլայնել սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեցող սուբյեկտների

շրջանակը, նման լիազորություն վերապահելով նաև անկախ սահմանադրական մարմիններին:

13. Կարծում ենք՝ տեղին է առանձնացնել ժամանակակից պառլամենտարիզմին բնորոշ հետևյալ հատկանիշները. ներկայացուցչական հաստատության (պառլամենտի) առկայությունը, ազատ, համընդհանուր, հավասար ընտրությունները, որպես ներկայացուցչական հաստատության ձևավորման եղանակ, օրենքի գերակայությունը, իշխանությունների բաժանման սկզբունքը՝ <<զսպումների և հակակշիռների>> արդյունավետ աշխատող համակարգով, կառավարության քաղաքականության և պառլամենտի քաղաքական առաջնահերթությունների պարտադիր համաձայնեցումը, պատգամավորների ազատ մանդատը:

14. Ժողովուրդը պետության ներկայացուցչական մարմիններին է փոխանցում ոչ թե հենց իշխանությունը, այլ միայն այդ իշխանության իրացման իրավունքը, ըստ որում՝ խիստ սահմանափակ ժամկետով: Ուստի, ոտնձգությունը ժողովրդական ինքնիշխանության ինստիտուտի նկատմամբ ոտնձգություն է ժողովրդական ինքնիշխանության նկատմամբ, ժողովրդի լիիրավ իշխանության և դրա գերակայության նկատմամբ, և դա պետք է որակվի որպես իշխանության յուրացում: Ներկայացուցչական համակարգի թարմացումը միայն ժողովրդի իրավունքն է, որն իրականացվում է ազատ և պարբերական ընտրությունների միջոցով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Մանուկյան Մ.Ա., Պառլամենտարիզմի կայացման հիմնախնդիրները ՀՀ Սահմանադրության իրացման համատեքստում: Եր.: <<Եվրոպրինտ>>, 2019. -109 էջ:

2. Մանուկյան Մ.Ա., Պառլամենտարիզմի հասկացությունը, էությունը և պատմական տեսակները: Եր.: <<Եվրոպրինտ>>, 2019. -88 էջ:

3.Մանուկյան Մ.Ա., Ժամանակակից պառլամենտարիզմի հայեցակարգային հիմնախնդիրները: Եր.: <<Եվրոպրինտ>>, 2019.-76 էջ:

4.Մանուկյան Մ.Ա., Պառլամենտարիզմի տեսական և պատմական հարցերի շուրջ: Եր.: <<Եվրոպրինտ>>, 2019.- 56 էջ:

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Մանուկյան Մ.Ա., Իշխանությունների բաժանման և պառլամենտարիզմի հիմնախնդիրները ՀՀ Սահմանադրության համատեքստում: ԲԱՆԲԵՐ Եվրասիա միջազգային համալսարանի, N 1, Երևան 2016, էջ 20-29:

2. Մանուկյան Մ.Ա., Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախապատմությունը, անհրաժեշտությունը և գործընթացը: ԲԱՆԲԵՐ Եվրասիա միջազգային համալսարանի, N 1, Երևան 2017, էջ 46-57:

3. Մանուկյան Մ.Ա., Խորհրդարանական կառավարման համակարգի հիմնական գծերը: ԲԱՆԲԵՐ Եվրասիա միջազգային համալսարանի, N 2, Երևան 2017, էջ 41-53:

4. Մանուկյան Մ.Ա., Օրենսդրական գործընթացի բարեփոխումներն ըստ 2015թ. սահմանադրական փոփոխությունների : <<Կանթեղ>>, ամսագիր N 1, Երևան 2018, էջ 173-186:

5. Մանուկյան Մ.Ա., Խորհրդարանական փոքրամասնության իրավունքների ընդլայնումը՝ ըստ 2015թ. սահմանադրական փոփոխությունների: ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես <<Օրինականություն>>, N 105, Երևան 2018, էջ 31-33:

6. Մանուկյան Մ.Ա., Պառլամենտարիզմը պատմության մեջ: Եվրոպական փորձը: ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես <<Օրինականություն>>, N 112, 2019, էջ 53-57 :

7. Մանուկյան Մ.Ա., ՀՀ Նախագահը՝ որպես Սահմանադրության երաշխավոր: <<Դատական իշխանություն>> գիտամեթոդական ամսագիր, 2019թ. մայիս- հունիս, էջ 31-41:

8. Մանուկյան Մ.Ա., ՀՀ ԱԺ արտաքին քաղաքական լիազորությունները: Պառլամենտական դիվանագիտության էությունը և հասկացությունը: <<Դատական իշխանություն>> գիտամեթոդական ամսագիր, 2019թ. նոյեմբեր- դեկտեմբեր, էջ 42-52:

9. Պետրոսյան Ռ.Գ., Մանուկյան Մ.Ա., Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հայաստանյան նմուշօրինակի (մոդելի) առանձնահատկությունները: ԲԱՆԲԵՐ Եվրասիա միջազգային համալսարանի, N 2, Երևան, 2019, էջ 10-31:

10. Մանուկյան Մ.Ա., Պառլամենտարիզմը պատմության մեջ: Եվրոպական փորձը: ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես <<Օրինականություն>>, N 115, 2020, էջ 46-52 :

11. **Մանուկյան Մ.Ա.,** <<Պատգամավորների հարցման և հարցապնդման սահմանադրաիրավական կարգավորումը>>, Դատական իշխանություն>> գիտամեթոդական ամսագիր, 2021թ. հուլիս –օոստոս, էջ 31-42:

12. **Մանուկյան Մ.Ա.,** <<Պառլամենտարիզմի բազային սկզբունքները>>, <<Դատական իշխանություն>> գիտամեթոդական ամսագիր, 2021թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 20-25:

13. **Մանուկյան Մ.Ա.,** <<Բազմակուսակցությունը՝ որպես պառլամենտարիզմի կայացման անհրաժեշտ պայման>>, <<Դատական իշխանություն>> գիտամեթոդական ամսագիր, 2022թ. հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 14-22:

14. **Մանուկյան Մ.Ա.,** <<Դատական իշխանության սահմանադրական կարգավիճակը իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում>>, հանձնված է տպագրության:

МАНУКЯН МАРТИН АНДРАНИКОВИЧ

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПАРЛАМЕНТА И ПАРЛАМЕНТАРИЗМА В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Связанные с парламентаризмом проблемы являлись ощутимыми в течение веков, однако они продолжают оставаться актуальными, в частности в контексте изменений Конституции РА в 2015г.

В настоящей работе была сделана попытка, учитывая прежние достижения относительно предмета задачи, найти более эффективные механизмы деятельности парламента.

В качестве объекта исследования были рассмотрены возникающие между высшими органами государственной власти конституционно-правовые отношения, а предметом исследования стала совокупность связанных с парламентаризмом проблем, относящиеся к ним современные концептуальные подходы.

Применяя всеобщий диалектический метод научного признания и методы сравнительно-правового, формально-юридического анализа, структурно-систематического, технико-юридического и другие, принимая за теоретическую мысль исследования и фундаментальные работы известных юристов, а за нормативную основу - Конституцию РА, международные и внутригосударственные нормативные правовые акты и практические материалы, в работе научно-практическому анализу подвергнуты понятие, сущность, исторические формы, современные разновидности парламентаризма, разделение и многопартийность властей, как необходимые условия становления парламентаризма, способы формирования Национального собрания, взаимоотношения Национального собрания с исполнительной и законодательной властью, автор одновременно связал происхождение и развитие парламента и парламентаризма, как в мире, так и в

Армении. Отдельным материалом для обсуждения стали полномочия парламента: законодательная работа, утверждение государственного бюджета, а также внешние политические полномочия НС и парламентская дипломатия.

На основании результатов исследований, к защите представлены 14 предложений и авторских формулировок, сделано почти столько же заключений.

В качестве научной новизны был отмечен сделанный автором целостный анализ становления парламентаризма и признаков (элементов), составляющих основы парламентаризма в контексте реализации действующей в РА Конституции.

Сформулированные на основании результатов выполненных исследований положения и заключения призваны развивать теорию конституционного права РА, а полученные результаты могут использоваться будущими исследователями в процессе их научных исследований.

Практическое значение исследования заключается в применении и использовании полученных результатов в правоприменительной практике, а также в процессе преподавания курса конституционного права в юридических вузах.

Основные положения диссертации отражены в научных публикациях автора.

MARTIN ANDRANIK MANUKYAN

THE PROBLEMS OF IMPROVEMENT OF PARLIAMENT AND PARLIAMENTARISM IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The main objectives related to parliamentarism have been in focus for centuries, but have remained relevant, in particular in the context of amendments to the Constitution of the Republic of Armenia in 2015.

Taking into consideration previous achievements related to this task, an attempt has been made in this work to find more effective structures for the parliament.

As an object of the study, constitutional-legal relations that arose between the supreme instances of government have been considered, and as a subject of research, the integrity of issues related to parliamentarism, modern conceptual approaches.

Applying the general dialectical method of scientific recognition and the methods of comparative legal, formal legal analysis, structural-systematic, technical-legal and others, taking the research and fundamental works of well-known lawyers as theoretical thought, and the RA Constitution, international and domestic normative legal acts and practical materials, the concept, essence, historical forms, modern varieties of parliamentarism, separation and multi-party system of powers, as necessary conditions for the formation of parliamentarism, methods of forming the National Assembly, the relationship of the National Assembly with the executive and legislative power, the author at the same time linked the origin and development of parliament and parliamentarism, both in the world and in Armenia. The powers of parliament, legislative work, confirmation of the state budget, as well as the foreign political powers of the National Assembly and parliamentary diplomacy have been examined separately.

Based on the results of the research, 14 proposals and author's formulations have been presented for defense of the dissertation, almost the same number of conclusions has been made.

The holistic analysis made by the author on the formation of parliamentarism and the signs (elements) that form the basis of parliamentarism in the context of the implementation of the Constitution in force in the RA has been noted as a scientific novelty.

The provisions and conclusions made based on the research are called upon to develop the theory of constitutional law of the Republic of Armenia, and the obtained results can be used by subsequent researchers in the process of their scientific researches.

The practical significance of the research is in the application and use of the obtained results in law enforcement practice, as well as in the process of teaching the course of constitutional law in law-oriented higher education institutions.

The main provisions of the dissertation have been reflected in the scientific publications of the author.